ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«16» մարտի 2019 թվականի № 83-Ա

«ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության 2019 թվականի փետրվարի 26-ին ներկայացված բողոքը և հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 48-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Արարատ Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Բողոքաբեր) 2019 թվականի փետրվարի 26-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին (այսուհետ՝ Նախարար) ուղղված գրությամբ խնդրել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Նախարարի 2019 թվականի փետրվարի 7-ի օգտակար հանածոյի արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքի տրամադրման մասին թիվ 32-Ա հրամանը:

Բողոքաբերը իր կողմից ներկայացված բողոքում նշել է, որ 2012 թվականի հոկտեմբերի 20-ին ստացել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ՇԱԹՎ-29/125 (նախկին 14/664), որի գործողության ժամկետն ընկած ժամանակահատվածը՝ 2011 թվականի հունիսի 28-ից մինչև 2036 թվականի հունիսի 28-ն է: Նշված թույլտվությունն իրավունք է վերապահում Բողոքաբերին ՀՀ Արարատի մարզի Վեդու Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հորատանցք թիվ 11-ից արդյունահանել ածխաթթվային հանքային ջուր: Վերոնշյալ թույլտվության հիման վրա ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Բողոքաբերի միջև 2012 թվականի հոկտեմբերի 20-ին կնքվել է թիվ ՊՎ-125 օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիր:

Համաձայն Նախարարի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 32-Ա հրամանի «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը տրամադրվել է օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/579 թույլտվությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ ածխաթթվային հանքային

ջրերի հորատանցք թիվ 11 և 12 հորատանցքերից արդյունաբերական (շշալցում) նպատակով ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար: Նշված հրամանի և թույլտվության հիման վրա 2019 թվականի փետրվարի 8-ի գրությամբ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը ծանուցվել է թույլտվության տրման պետական տուրքի վճարման և ընդերքօգտագործման թիվ Պ-579 պայմանագրի վավերացման մասին:

Բողոքաբերը ներկայացված բողոքում հայտնում է, որ վիճարկվող հրամանը կայացնելիս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, քանի որ հարուցելով վարչական վարույթ չի պարզել վարույթի մասնակիցների շրջանակը, այն է՝ վարույթին որպես երրորդ անձ չի ներգրավել Բողոքաբերին: Ըստ Բողոքաբերի վերջինս պետք է ներգրավվեր նշված վարչական վարույթի որպես երրորդ անձ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքաբերը ունենալով ՀՀ Արարատի մարզի Վեդու Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հորատանք թիվ 11-ից օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն՝ նշված վարչական վարույթում հանդիսացել է շահագրգիռ անձ, և հետևաբար վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտն անվերապահորեն շոշափելու էր Բողոքաբերի իրավունքները և օրինական շահերը: Ուստի Բողոքաբերը գտնում է, որ վարչական վարույթն իրականացվել է օրենքի իմպերատիվ նորմերի խախտմամբ, ուստի դրա արդյունքում ընդունված վարչական ակտն անհիմն է և անօրինական:

Միևնույն ժամանակ Բողոքաբերը նշել է, որ բողոքարկվող հրամանին նախորդած վարչական վարույթին վերջինիս մասնակից չդարձնելով խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 13-րդ հոդվածով, ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով ամրագրված վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը, ինչը ըստ Բողոքաբերի արդեն իսկ բավարար է վիճարկվող հրամանը ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Նախարարի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի օգտակար հանածոյի արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքի տրամադրման մասին թիվ 32-Ա հրամանը:

Բողոքաբերի ներկայացուցիչը 2019 թվականի ապրիլի 1-ին վարչական վարույթի շրջանակներում ներկայացրել է «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության դիրքորոշումը.

Բողոքաբերը անդրադառնալով «ԱՎՇԱՐ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության 2017 թվականի Աշխատանքային նախագծին հայտնել է, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանվում են այն պարտադիր պայմանները, որոնց պետք է համապատասխանի օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը: Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

Ուսումնասիրելով «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության 2017 թվականի աշխատանքների նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ), Բողոքաբերը պարզել է, որ այն չի համապատասխանում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներին, մասնավորապես նախագծում ուսումնասիրելով «Վեդու Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 11 հորատանցքի հորատբերանի սարքավորումների սխեման»՝ պարզ է դարձել, որ սարքավորումների սխեման նախագծելու ընթացքում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ թիվ 11-րդ հորատանցքը ներկայումս շահագործվում է Բողոքաբեր ընկերության կողմից և վերջինս թիվ 11-րդ հորատանցքի հորտաբերանի վրա արդեն իսկ տեղադրել է համապատասխան սարքավորումները, որոնք նախատեսված են ստորեկրյա ջրերի արդյունահանման համար: Իսկ Նախագծում առկա սարքավորումների սխեմայից պարզ երևում է, որ հորտաբերանի վրա նախատեսվում է տեղադրել սարքավորում (և/կամ սարքավորումներ), ընդ որում սարքավորումը առանձնացված է լինելու նաև շինությամբ: Այլ կերպ ասած Նախագծում ներկայացված սխեմային համապատասխան սարքավորումների տեղադրումը հնարավոր չէ իրականացնել թիվ 11 հորատանցքի վրա:

Ըստ Բողոքաբերի նշված հանգամանքը վկայում է այն մասին, որ Նախագիծը ըստ էության կազմվել է շաբլոնային տարբերակով, որտեղ չեն ներառվել իրական իրավիճակը բնութագրող տվյալները: Նշված հանգամանքին անդրադարձ չի կատարվել նաև վիճարկվող հրամանը կայացնելու ընթացքում:

Բողոքաբերը անդրադարձել է նաև Նախագծով «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության կողմից ընտրված «CHRIWA» մոդելի տեխնոլոգիական սարքերին, նշելով, որ «նախատեսվում է ներդնել շուրջ մեկ մլն. դրամ»: Սակայն վերջինս գտնում է, որ նման չափով գումարի ներդնումը իրատեսական չէ, քանի որ այդ աշխատանքների արժեքը մր քանի անգամ գերազանցելու է մեկ միլիոն ՀՀ դրամը: Բողոքաբերի կարծիքով սա ևս վկայում է այն մասին, որ Նախագիծը կազմված է ձևական կողմը ապահովելու համար և այն իր մեջ չի պարունակում իրականությանը համապատասխանող տեղեկություններ:

Բողոքաբերը անդրադարձել է նաև Նախագծի 9-րդ (շրջակա միջավայրի պահպանությունը, բնապահպանական կառավարման պլանը) բաժնում նկարագրված հանքավայրի շահագործման ազդեցությանը շրջակա միջավայրի վրա, նշելով որ ամենևին պարզ չէ, թե ինչպիսի ազդեցություն կունենա հանքի շահագործումը շրջակա միջավայրի վրա, քանի որ նախագծի հեղինակը բավարարվել է ընդամենը հայտարարությամբ այն մասին, որ հանքի շահագործումը նվազագույն ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա առանց մանրամասնելու, թե ինչով է պայմանավորված ազդեցության նվազագույն լինելը: Բացի այդ չի պարզաբանվել, թե որն է լինելու այդ նվազագույն ազդեցությունը:

Ի թիվս վերը նշված անհամապատասխանությունների Բողոքաբերը փաստում է, որ Նախագիծը չի պարունակում՝

1. առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետի հաշվարկը,

2. սոցիալական ազդեցության գնահատականը:

Հետևապես, հիմք ընդունելով վերոգրյալը Բողոքաբերը փաստում է, որ Նախագիծը չի համապատասխանում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներին:

Վերջինս անդրադարձել է նաև պետական փորձաքննական եզրակացությանը և ՀՀ Արարատի մարզի Վեդու Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 11 և 12 հորատանցքերի հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին, փաստելով, որ փորձաքննությունը չի անդրադարձել այն հանգամանքին, թե ինչ ազդեցություն կունենա թիվ 11 և թիվ 12 հորատանցքերի միաժամանակյա շահագործումը ընդերքում պարփակված ջրերի վրա ընդհանրապես:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքաբերը հայտնել է, որ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը ենթակա է եղել մերժման, սակայն այն բավարարվել է:

Բողոքաբերը գտնում է, որ առկա է եղել «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը մերժելու օրենքով սահմանված այլ հիմք:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը ենթակա է լինում մերժման: Նշված նորմով, ի թիվս այլի՝ որպես օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը մերժելու հիմք սահմանվում է նաև դիմումում ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսանալու հանգամանքը:

Քննարկվող դեպքում թիվ 11-րդ հորատանցքի վրա գրանցված է «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը, ինչը հաստատվում է օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/125 (նախկին 14/664) թույլտվությամբ: Այսինքն՝ ստացվում է, որ թիվ 11-րդ հորատանցքը հանդիսացել է այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ, հետևապես ակնհայտ է, որ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության դիմումը ենթակա է եղել մերժման: Նշվածից հետևում է, որ առկա է եղել «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը մերժելու օրենքով սահմանված հիմք Օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ ենթակետը, սակայն դիմումը բավարարվել է:

Բողոքաբերը գտնում է, որ Դաշտաքար համայնքի կողմից կազմված փաստաթղթերը պարունակում են իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն: Այսպիսով՝ ուսումնասիրելով Արարատի մարզի Դաշտաքար համայնքի կողմից կամզված հանրային լսումների արձանագրությունները պարզվել է, որ վարչական վարույթի նյութերում առկա են հանրային լսումների վերաբերյալ կազմված երկու արձանագրություն (21.11.2017թ-ին և 11.09.2017թ-ին): Ընդ որում, 2017 թվականի սեպտեմբերի 11-ի արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ դրանով համայնքը որոշում չի կայացրել և տվել է ընդամենը նախնական համաձայնություն հանքավայրի շահագործման աշխատանքներին, իսկ 2017 թվականի նոյեմբերի 21-ին կայացած հանրային լսումների արդյունքում որոշում է կայացվել հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Հատկանշական է այն, որ վարչական վարույթի նյութերում առկա է նաև Դաշտաքար համայնքի ղեկավար Ն.Մալխասյանի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը, որով սահմանվել է, որ համայնքի ավագանին որոշում է տալ նախնական համաձայնություն «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության կողմից հանքավայրի շահագործման աշխատանքներին,

սակայն հատկանշականը այն է, որ ավագանու որևէ անդամ նշված որոշումը չի ստորագրել: Բացի այդ, փաստորեն, ստացվում է, որ մինչև հանրային լսումների անցկացումը Դաշտաքար համայնքի ղեկավարը արդեն իսկ որոշում էր կայացրել նախնական հավանություն տալ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող աշխատանքներին:

Բողոքաբերը գտնում է, որ նշված հանգամանքների առկայությունը բավարար է եղել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին ենթակետի հիմքով դիմումը մերժելու համար:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Նախարարի պաշտոնակատար՝ Գարեգին Բաղրամյանի 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 32-Ա հրամանը:

2. «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը.

«Ավշար Ջուր» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչը հայտնել է, որ ուսումնասիրելով Բողոքաբեր ընկերության դիրքորոշումը, դրանում բերված փաստարկներն ու հիմնավորումները՝ գտնում է, որ այն անհիմն է, իսկ դրանում ներկայացված փաստարկները էական նշանակություն չունեցող:

Ընկերության ներկայացուցիչը նախ նշել է, որ գտնում է, որ տվյալ դեպքում անհասկանալի է մի իրավիճակ, երբ սուբյեկտը բողոք է ներկայացնում ու հետո նաև արտահայտում դիրքորոշում սեփական բողոքի հետ կապված: Ընկերության ներկայացուցչի կարծիքով «Դիրքորոշում» վերնագրված փաստաթուղթն բովանդակային առումով ըստ էության իրենից ներկայացնում է բողոքի հիմքերի ավելացում, որի մասով ընթացակարգ օրենքով նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանված է, որ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ): Նույն օրենքի 72-րդ հոդվածով սահմանված է, թե ինչ պետք է պարունակի բողոքը:

Մեջբերելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասով, 20-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված դրույթները՝ Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ վարչական ակտ հայցող կամ վարչական ակտի, որպես իրավական ակտի, գործողությունը դադարեցնող ակտի կայացում հայցող բողոքի քննարկման շրջանակներում նախատեսված չէ դիմումի բովանդակային փոփոխություն, ինչպես նաև դիմումի կամ բողոքի հիմնավորումների փոփոխության հնարավորություն, հետևաբար՝ «Դիրքորոշում» վերնագրով բողոքի հիմքերի փոփոխությունը ենթակա չէ քննարկման:

Այնուամենայնիվ, անդրադարձ կատարելով բողոք ներկայացնողի դիրքորոշմանը բովանդակային ու հիմնավորվածության տեսանկյունից, Ընկերության ներկայացուցիչը գտնում է, որ այնտեղ բերված փաստարկները հիմնազուրկ են՝ ելնելով ստորև ներկայացված փաստարկներից:

Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ վերջինիս կողմից ներկայացված աշխատանքային նախագծի վերաբերյալ Բողոքաբերի փաստարկներն ընդամենը գնահատակողական բնույթի են, որում կարելի է համոզվել ընդամենը Ընկերության կողմից կազմված ու լիազոր մարմին ներկայացված աշխատանքային նախագծի պարզ ընթերցումից ու դրա վերլուծությունից, որտեղ հստակ կերպով բոլոր այն անհրաժեշտ ու կարևոր պայմանների ապահովմամբ, որոնք նախատեսված են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածում, նախատեսվել են ու հիմնավորվել բոլոր այն գործողությունների համալիրը, որոնք անհրաժեշտ են ինչպես հանքավայրի շահագործման համար, այնպես էլ հետագայում շահագործման դադարեցման դեպքում հանքի փակման համար՝ ներառյալ աշխատանքներին ներգրավվող թվով 7 անձանց աշխատանքային ու աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում հատուցումների մասով:

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ սարքավորումների տեղադրման սխեմաներում իրենց կողմից արդեն իսկ տեղադրված սարքավորումների ներառված չլինելու փաստարկին, Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ վկայակոչված սխեմաները վերաբերվում են սարքերի տեխնիկական բնութագրերին, այլ ոչ թե դրանց հստակ տեղակայմանը: Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ հստակ տեղակայումը բնականաբար տեղի էր ունենալու բացառապես բողոքաբերի շահերի պաշտպանության պայմաններում:

Անդրադառնալով բողոքաբերի այն դիտարկմանը, որ նախագծում առաջարկվում է տեղադրել «CHRIWA» մոդելի տեխնոլոգիական սարքեր, այն պայմաններում, երբ նախատեսված է ներդնել ընդամենը մեկ մլն ՀՀ դրամ, Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ այդ գումարը զուտ նախնական է: Իսկ «CHRIWA» մոդելի տեխնոլոգիական սարքերին, ապա բնականաբար դրանց արժեքը ներառված չի ու չէր էլ կարող լինել, կապված այն հանգամանքի հետ, որ դրանք պետք է ձեռք բերվեին արտերկրից ու դրանց հստակ գինը պարզ կարող էր լինել դրանք ՀՀ տարածք ներմուծելուց հետո:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից ներկայացված մյուս փաստարկներին, Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ դրանք սուբյեկտիվ գնահատման արդյունք են ու չեն պարունակում մասնագիտական հիմնավորումներ: Հակառակ պարագայում նման հիմքերի առկայության դեպքում լիազոր մարմինը, ելնելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածների պահանջներից կամ հետ կվերադարձներ թերությունների ուղղման համար կամ առհասարակ կմերժեր այն:

Բողոքաբերի՝ Հայտին վերաբերվող փաստարկների մասին Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ հայտում հնարավորինս մանրամասն ներկայացված են անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, ինչպես նաև Դաշտավան համայնքի նկարագիրը, որի վարչական տարածքում է գտնվում հանքավայրը, բնականաբար այդ համայնքի բնակիչներն էլ պետք է հիմնականում իրականացնեն հանքի շահագործման աշխատանքները, որոնք կարող են հստակեցվել միայն հետագայում հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ժամանակ, երբ կիրականացվեն համապատասխան աշխատակազմի ընտրության ու ուսուցման ու աշխատանքային գործընթացներին ներգրավման միջոցով:

Միայն հանքի շահագործման հնարավորություն ունենալու պայմաններում կարելի է նախատեսել, թե ինչ պայմաններում ու ինչ պահանջներին բավարարող համայնքի բնակիչներ կներգրավեն գործընթացներին:

Անդրադառնալով Եզրակացության մասով բողոքաբերի փաստարկներին՝ Ընկերության ներկայացուցիչը գտնում է, որ տվյալ դեպքում Եզրակացությունը եղել է ոչ միայն հիմնավոր, այլ նաև օրինական այն պարզ պատճառով, որ դրա մեջ անդրադարձ է կատարվել բացառապես հայտատու վարչական ակտի հասցեատեր սուբյեկտին, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի ու տվյալների իսկությանն ու իրավաչափությանը ու դրանում այլ տնտեսվարողի գործողությունների մասով, ով չէր կարող հանդիսանալ հայցվող վարչական ակտի հասցեատեր: Տվյալ դեպքում Եզրակացության մեջ ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել բացառապես «Ավշար Ջուր» ՍՊԸ-ի գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը այն պայմանների ու պահանջների կիրառման պայմաններում, որոնք ներկայացվել են վերջինիս՝ ելնելով ենթադրվող գործունեության մասով ՀՀ բնապահպանության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 347-Ն հրամանի հիման վրա տրված համար ՏԱ 53 տեխնիկական առաջադրանքի, դրա հիման վրա ներկայացված հայտի ու այլ փաստաթղթերի պահանջներից:

Ընդ որում Ընկերության ներկայացուցիչը կարծում է, որ այստեղ «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության գործունեության մասով անդրադարձ կատարելը կհանդիսանար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում սահմանված առավելագույնի սկզբունքի խախտում, քանզի այդ տնտեսվարողի գործողությունների՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության մասով արդեն իսկ առկա է եղել եզրակացություն ու ըստ դրա տրվել է համապատասխան թույլտվություն:

Ամփոփելով վերոգրյալը, միաժամանակ անդրադառնալով Բողոքաբերի կողմից դիրքորոշման մեջ նշված այլ փաստարկներին՝ Ընկերության ներկայացուցիչը գտնում է, որ Նախարարի պաշտոնակատար Գարեգին Բաղրամյանի կողմից կայացված հրամանով «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը տրված թիվ ՇԱԹ-29/579 թույլտվությունը եղել է օրինաչափ, քանզի բացակայել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված մերժման հիմքերը, կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչի մասին կարելի է համոզվել դիմումին ու դրանց կից ներկայացված բոլոր փաստաթղթերին ծանոթանալիս:

Ավելին՝ դրա հետ կապված անցկացվել են թվով 4 հանրային քննարկումներ, որոնց տեղի ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է օրենքով սահմանված կարգով, իսկ դրանց տեղի ունենալը ոչ միայն արձանագրվել, այլև տեսագրվել է ու դրանց վերաբերյալ ապացույցները ներկայացվել է լիազոր մարմին (տեղի ունեցած մի քանի հանրային լսումների արձանագրություններ ներկայացվել են Հանձնաժողովին):

Տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից համապատասխան թույլտվություն չտալը կհանդիսանար խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերության ներկայացուցիչը խնդրել է Բողոքաբերի կողմից «Դիրքորոշում» վերնագրված փաստաթուղթը չդիտարկել բողոքի հիմնավորումների համատեքստում, իսկ մնացած հիմնավորումների մասով, անհիմն լինելու հիմքով բողոքը, մերժել:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք ներկայացրած անձի և Նախարարության ընդերքի գործակալության կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում են հետևյալ փաստական հանգամանքները.

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 32-Ա հրամանը:

2. Նախարարության և «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության միջև կնքված ընդերքօգտագործման թիվ ՊՎ-125 պայմանագիրը:

3. Նախարարության և «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության միջև կնքված ընդերքօգտագործման թիվ Պ-579 պայմանագիրը:

4. «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/125 թույլտվությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հորատանք թիվ 11 և 12 հորատանցքերից արդյունաբերական (շշալցում) նպատակով ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

5. «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/579 թույլտվությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ ածխաթթվային հանքային ջրերի հորատանք թիվ 11 և 12 հորատանցքերից արդյունաբերական (շշալցում) նպատակով ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

6. Դաշտաքար համայնքի կողմից իրականացված հանրային լսումների արձանագրությունները:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության համար էական եմ համարում հետևյալ հարցադրումներին անդրադառնալը.

1. Արդյո՞ք ոչ իրավաչափ է եղել 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 32-Ա հրամանով «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/579 թույլտվության տրամադրումը:

2. Արդյո՞ք Դաշտաքար համայնքի կողմից իրականացված հանրային լսումները համարվում են օրինաչափ:

Վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովը վարչական վարույթի նիստերի շրջանակներում լսելով կողմերի ներկայացրած դիրքորոշումները, ուսումնասիրելով վարչական վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ Արարատի մարզի Վեդու («Արարատ») ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի պաշարները հաստատվել են 1973 թվականի նոյեմբերի 16-ին ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից (արձանագրություն թիվ 7032) 8,39 լ/վրկ ջրաքանքկով, այդ թվում՝

- թիվ 11 հորատանցք – 7,15 լ/վրկ (ըստ A կարգի)
- թիվ 12 հորատանցք – 0,59 լ/վրկ (ըստ B կարգի)
- թիվ 19 հորատանցք – 0,65 լ/վրկ (ըստ B կարգի)

Ընդամենը՝ 8,39 լ/վրկ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ ընդերքի տեղամասը՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս է, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ: Նույն հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի համաձայն՝ ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը՝ ընդերքօգտագործման ընթացքում այնպիսի տեխնոլոգիաների կիրառումն է, որի դեպքում հնարավորինս կնվազեն օգտակար հանածոյի կորուստները, և կստացվի տնտեսական առավելագույն շահույթ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասում նշված են դիմումի մերժման հիմքերը, ըստ դրա 2-րդ կետի՝ լիազոր մարմինը մերժում է դիմումը, եթե դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ է:

«Արարատ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է հորատանցքից դուրս եկող ջրի որոշակի քանակ և չի ենթադրում տեղամասի հետ որևէ գործողություն՝ քանդում, հորատում, պայթեցում, հորանների և բովանցքերի անցում: Ընկերությանը չի տրամադրվել որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, ուստի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետի դրույթի կիրառումն այս պարագայում անհիմն է:

«Արարատ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ընդերքից հանքային ջրի 7,15 լ/վրկ ծախսով հորատանցքից դուրս եկող ջրի մի մասը՝ 4,0 լ/վրկ: Ջրի 3,15լ/վրկ ծախսով մյուս մասը ազատ է, չի ծանրաբեռնված ընդերքօգտագործման իրավունքով ու հանդիսանում է պետության սեփականությունը:

Իսկ համաձայն Նախարարի և «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության միջև կնքված օգտակար հանածոյի արդյունահանման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ Պ-579 պայմանագրին կից ներկայացված թիվ ՇԱԹ-29/579 թույլտվության՝ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը տրամադրվել է տարեկան 117,9 հազ. մ^3 (հոր. N 11՝ 99.3 հազ. մ^3, հոր. N 12՝ 18.6 հազ. մ$^{3)}$ արտադրողականություն ունեցող հանքից 3.15 լ/վրկ ըստ A կարգի (հոր. 11) և 0,59 լ/վրկ ըստ B կարգի (հոր. 12) հանքային ջրի պաշար արտահանելու իրավունք: Այսպիսով, թույլտվության բովանդակությունից էլ ակնհայտ է դառնում այն փաստը, որ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ոչ թե ընդերքի կոնկրետ տեղամասը, այլ պարզապես այդ տեղամասը օգտագործելով ընդերքում եղած որոշակի ջրերի քանակը արդյունահանելու իրավունքը: Հետևաբար, Հանձնաժողովը գտել է, որ անհիմն է «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության պնդումները այն մասին, որ Նախարարությունը պարտավոր էր մերժել «Ավշար Ջուր» ՍՊ ընկերության դիմումը՝ հիմնվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ կետի 2-րդ

ենթակետով սահմանված՝ դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսանալու հիմքով:

Նշենք նաև, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 65-րդ հոդվածը պահանջում է օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզումն ու ողջամիտ և համալիր օգտագործումը: Ընդերքօգտագործման իրավունքով չծանրաբեռնված հանքային ջուրը այլ տնտեսվարողին տրամադրելով իրականացվում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի վերոնշյալ պահանջը:

Միաժամանակի անհրաժեշտ է նշել, որ ընդերքի տեղամասը և հորատանցքը տարբեր հասկացություններ են: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի հստակ սահմանելով ընդերքի տեղամասի հասկացությունը, սակայն չի սահմանում հորատանցքի հասկացությունը, ըստ բառարանի՝ հորատանցքը, ապարի հատվածում մի քանի մետրից մինչև 9 կմ ու ավելի խորությամբ և սովորաբար 75-300 մմ տրամագծով հանքափորվածք է:

Հարկ է նշել նաև, որ հանքային ջրերի հաստատված շահագործական պաշարները վերականգնվող ռեսուրսներ են, որն, ըստ ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1480-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի, բնապահպանական պահանջների հաշվառմամբ, շահագործման ընդունված ռեժիմի դեպքում կարող է վերցվել հանքավայրից՝ տեխնիկատնտեսապես հիմնավորված ջրհան կառույցներով՝ պահպանելով ջրի պահանջվող քանակը և որակը՝ ջրօգտագործման հաշվարկային ամբողջ ժամկետում:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վարչական վարույթի նիստի ընթացքում իր դիրքորոշումը ներկայացնելու նպատակով ելույթ ունեցավ վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովի անդամ, Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատար տիկին Շուշանիկ Քերոբյանը: Համաձայն չլինելով վերջինիս կողմից արտահայտած դիրքորոշմանը, «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ռաֆայել Կրոյանը, հանձնաժողովի անդամ Շուշանիկ Քերոբյանին բացարկ հայտնելու միջնորդությամբ հանդես եկավ: Հանձնաժողովի նախագահի կողմից մերժվեց Բողոքաբեր ընկերության ներկայացուցչի միջնորդությունը՝ քանի որ այն չի բխում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածից:

Ինչ վերաբերում է Դաշտաքար համայնքի կողմից իրականացված հանրային լսումների օրինականությանը, ապա Հանձնաժողովը գտել է, որ «Ավշար Ջուր» ՍՊ ընկերությունը իր կողմից արտահայտած դիրքորոշման մեջ հստակ անդրադարձել է Բողոքաբեր ընկերության այս հարցին, նշելով որ բոլոր գործողությունները իրականացվել են օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան: Կողմի նշված դիրքորոշումը հիմնավորվում է նաև Ընդերքի գործակալության կողմից Նախարարությանը 2019 թվականի մարտի 15-ին տրամադրված համապատասխան փաստաթղթերով, արձանագրություններով (մի քանի հանրային լսումների արձանագրություններ ներկայացվել են Հանձնաժողովին):

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Արարատ Գրուպ» ՍՊ ընկերության 2019 թվականի փետրվարի 26-ին ներկայացված բողոքը մերժել՝ Նախարարի 2019 թվականի փետրվարի 7-ի օգտակար հանածոյի արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքի տրամադրման մասին թիվ 32-Ա հրամանը թողնել անփոփոխ:

2. Նախարարության իրավաբանական վարչությանը՝ եռօրյա ժամկետում ծանուցել կողմերին վարչական բողոքի մերժման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/16/2019

X

VERIFIED OCSP 16-Apr-19 18:08:32 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118